# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

## ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/6 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**02 ապրիլի 2026թ.**

**ք. Երևան**

2026թ. մարտի 11-ից ապրիլի 2-ը ՀՀ, ք. Երևան, Օրբելի 22 հասցեում գտնվող Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի շենքում տեղի ունեցավ գիտական սարքերի և սարքավորումների ձեռքբերման ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/6 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Հ. Սարգսյան՝ | Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահի տեղակալ, |
| Կ. Ենկոյան՝ | ԵՊԲՀ գիտության գծով պրոռեկտոր, ԵՊԲՀ «ՔՈԲՐԵՅՆ» ուղեղի հիմնարար հետազոտությունների գիտակրթական կենտրոնի գլխավոր գիտաշխատող, նեյրոգիտության լաբորատորիայի ղեկավար, |
| Կ. Ֆերեշետյան՝ | ԵՊԲՀ «ՔՈԲՐԵՅՆ» ուղեղի հիմնարար հետազոտությունների գիտակրթական կենտրոնի նեյրոգիտության լաբորատորիայի գիտաշխատող, կենսաքիմիայի ամբիոնի դասախոս: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Հ. Սարգսյանը, որին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Ա. Առաքելյանը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված Հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջը համարվում է պահպանված, իսկ նիստն իրավազոր, որպիսի փաստով պայմանավորված Հանձնաժողովի նիստը հայտարարվեց բացված:

### ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու մասին:
2. Ընթացակարգը չկայացած հայտարարելու և անգործության ժամկետ սահմանելու մասին:

### 1. «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊԸ-Ի ՀԱՅՏՆ ԱՆԲԱՎԱՐԱՐ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովն արձանագրեց, որ.

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
ՄՈՒՏՔ № Ա 25239
02 04 20 26

1. «Իմպեքսո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում 2026 թվականի փետրվարի 18-ին արձանագրվել էին անհամապատասխանություններ, որով պայմանավորված և Կարգի 41-րդ կետի կիրառմամբ 2026թ. մարտի 3-ին Հանձնաժողովը որոշել էր նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և առաջարկել «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել շտկման ենթակա արձանագրված անհամապատասխանությունները:

2. Նիստը կասեցնելուց հետո «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում համակարգի https://eauction.armeps.am/ միջոցով չեն ներկայացվել արձանագրված թերությունների շտկված տարբերակները:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

2026 թվականի ապրիլի 2-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:
2. «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊԸ-ի հայտը գնահատել որպես անբավարար և մերժել՝ հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետով և Ընթացակարգի հրավերի 8.11-րդ կետով սահմանված պահանջները:
3. Ընթացակարգը հայտարարել չկայացած, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջները:
4. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով սահմանված պահանջները իրագործելու նպատակով դիմել Պատվիրատուի ղեկավարին, իսկ նշյալ կետն իրագործելու անհնարինության դեպքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջների համաձայն նախաձեռնել գործընթաց՝ «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:
5. Համակարգի կողմից գնահատման մեջ ներառված հայտերի գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:
6. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Չ/Հ | Գնահատման մեջ ներառված մասնակցի անվանումը* | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1-3-րդ | «ԻՄՊԵՔՍՈ» ՍՊԸ | անբավարար |

*Գնահատվում են միայն մասնակիցների կողմից ներկայացված այն հայտերը, որոնք համակարգի կողմից ներառվել են գնահատման ենթակա հայտերի մեջ:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով վերոնշյալը, 2026թ. ապրիլի 2-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընթացակարգը հայտարարել չկայացած, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-ին կետով սահմանված պահանջները:
2. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջների համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել Ընթացակարգը չկայացած

հայտարարելու մասին որոշումը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Հ. Սարգսյան __________________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Կ. Ենկոյան __________________

Կ. Ֆերեշետյան __________________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Ա. Առաքելյան __________________